Հաշվետվություն

Անունը, Ազգանունը

Մակար Ղամբարյան

Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները

Մանիլա (Ֆիլիպինների Հանրապետություն) 2017 թվականի նոյեմբորի 6-10-ը

Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մանիլա քաղաքում Ասիական Զարգացման Բանկի (այսուհետև՝ ԱԶԲ) կողմից կազմակերպված երկրորդ Ասիական Ֆինանսական Համաժողովին մասնակցություն:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում քննարկվել են ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները և դրանց կիրառման հնարավորությունները տնտեսության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ դրանց դերակատարությունը Կայուն զարգացման նպատակներ 2030-ի իրագործմանը, պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը և այլն: Միջոցառման ընթացքում ԱԶԲ համապատասխան ներկայացուցիչների, մասնակից կազմակերպությունների և այլ երկրների պատասխանատու պետական կառույցների ներկայացուցիչների հետ քննարկվել են երկրների թվային օրակարգերի ձևավորմանը և դրա իրագործմանը վերաբերող հարցեր:

Համաժողովի ընթացքում կայացել են նաև երկկողմանի հանդիպումներ Հայաստանում՝ ԱԶԲ գործնեությունը համակարգող ԱԶԲ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի ստորաբաժանման մի շարք պաշտոնյաների հետ և քննարկվել են

Հայաստանում իրականացվող ծրագրերին վերաբերող մի շարք թեմաներ: Մասնավորապես տեղի են ունեցել հանդիպումներ գլխավոր տնօրեն՝ Շոն Մ. ՕՍալիվանի, գլխավոր տնօրեն տեղակալ Հոնգ Վեյի, քաղաքաշինության և ջրային ստորաբաժանման տնօրեն Յոնգ Յեյի, տրանսպորտային և հաղորդակցության ստորաբաժանման տնօրեն Դոնգ-Սու Պյոյի և պորտֆելի կառավարիչ Ջասփեր Պետերսոնի հետ:

Գործուղվողը

Մակար Ղամբարյան

Ամսաթիվը

13.11.2017թ.